10.56737/2953-7843-2023.10-152

ՈՉ ՅԱՓՇՏԱԿԵՍՑՈՒՔ, ՈՉ ԱՒԱՐԵՍՑՈՒՔ, ՈՉ ԱՌՑՈՒՔ ՁԱՅԼՈՅ. Ի՞Ի ԿԵՑՑՈՒՔ...

«Բուզանդարանքում» կարճառօտ, բայց յոյժ խօսուն անդրադարձ կայ Հայոց Լուսաւորչի Թոռ Գրիգորիսին. «Վասն Գրիգորիսի եպիսկոպոսի, որդւոյ Վրթանայ, եղբօրն Յուսկան, որ կաթողիկոսն էր կողմանցն Վրաց եւ Աղուանից։ Իբրեւ եկաց սա յիւրում պաշտամանն, մինչ դեռ մանուկն եւս էր, շինեաց, նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ...» եւ գնաց քարոզելու եւ աւետարանելու «զՔրիստոս»։

Եւ մօտեցաւ Գրիգորիսը խմբուածներին եւ «ասէ ցնոսա, թէ՝ «Ծաներո՛ւք զԱստուած»։ Լուան եւ ընկալան զառաջինն եւ հնազանդեցան։ Ապա սկսան քննել զօրէնսն Քրիստոսի, եւ ուսան ի նմանէ, թէ՝ ատելի է Աստուծոյ աւարառութիւն եւ յափշտակութիւն, սպանութիւն, ագահութիւն, այլազրկութիւն, զայլոցկերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց։ Ապա այսպիսի իմն իրօք իբրեւ լուան, զայրացան ընդ բանս նորա եւ ասեն. «Զի ո՛չ յափշտակեսցուք, զի ո՛չ աւարեսցուք, զի ո՛չ առցուք զայլոյ. ի՞ւ կեցցուք...»։ Չկամենալով-չկարողանալով հրաժարուել գազանաբարոյ կենցաղից՝ արիւնռուշտները «...կալան ձի մի ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագույ ձիոյն եւ արձակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնեայ։ Եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս...»[1]։ Նահատակ սուրբի մարմինը յուղարկաւորուեց Ամարասում՝ Արցախի մեծագոյն սրբարաններից մէկում։ Եւ չնայած դարեր են անցել իր նուիրական գործունէութեան եւ քարոզութեան ժամանակներից, սակայն չգողանալու, չկողոպտելու, ուրիշինը չյափշտակելու,

[1] *«Բուզանդարան պատմութիւնք», Գ. դպր., գլ. Զ.։*

չիւրացնելու, չաւերելու մասին նրա խօսքերը՝ պարզ համամարդկային նուազագոյն մտքերը դեռ չեն հասել աշխարհի մութ ու մռայլ կողմերը, եւ սուրբ նահատակին չհասնելով՝ Լոյսի թշնամիները պայքարում են, Գրիգորիսի, իր յաջորդների ու նախորդների, ազգակիցների ու արիւնակիցների կանգնեցրած տաճարների, աղօթատների, կրթական ակութների եւ անգամ շիրմաքարերի դէմ, որ յօշում եւ աւերում են, փշրում եւ ջնջում աշխարհի երեսից: Ահա Արցախի մշակութային անանց գանձերի՝ յատկապէս քրիստոնէական ժառանգութեան ոչնչացման եւ իւրացման հանգամանքներին է նուիրուած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հերթական լոյսընծայումը[2], որ Ամենայն Հայոց Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսի հրամանով ընթերցողի դատին է յանձնել Սուրբ Աթոռի հրատարակչութիւնը:

Հայաստանն առաջին պետութիւնն էր, որ Դ. դարի սկզբին քրիստոնէութիւնը հռչակեց պետական կրօն՝ համաքրիստոնէական մեծագոյն սուրբ, Հայոց առաջին հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի քարոզներով եւ Սուրբ Տրդատ Դ. արքայի ջանքերով: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ իբրեւ ազգային հոգեւոր կառոյց եւ մէկը աւանդական Եկեղեցիներից, աւելի քան երկու հազարամեակ անխոտոր առաջնորդում է իր ժողովրդին առ վարդապետութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, սուրբ առաքեալների, շնորհընկալ սրբերի եւ եկեղեցական հայրերի ուսուցումները:

Եւ քրիստոնէութեան արշալոյսին, երբ դարձի եկաւ կենտրոնական Հայաստանը, անմիջապէս յաջորդեց Փրկչի աւետարանի քարոզը Հայոց Արեւելից կողմերում՝ «յամուր երկրին Առձախոյ»՝ պատմական Հայաստանի տասներորդ նահանգում, որի սահմանագլխին՝ Արտազ գաւառում, նահատակուել էր Հայքում քրիստոնէութիւն տարածելու կոչուած Թադէոս առաքեալը: Նրա մասին պատմում են, որ «եկեալ ի Հայս՝ յԱրտազ գաւառ. անդ առնու վախճան մարտիրոսութեան ի Սանատրկոյ արքայէն Հայոց»[3]: Երանելի ուսուցչի մահուան գոյժը Երուսաղէմ է հասցնում Թադէոսի աշակերտներից մէկը՝ Եղիշէն. «Եւ աշակերտ նորին Սուրբն Եղիշայ դառնայ յԵրուսաղէմ եւ պատմէ զտենչալի նահա-

[2] Արմինէ Տիգրանեան, *Արցախի քրիստոնէական ժառանգութեան ոչնչացման եւ բռնիւրացման ագրբեջանական քաղաքականութիւնը, Ս. Էջմիածին, 2023, 160 էջ + 8 գունաւոր ներդիր էջ:*

[3] Մովսէս Դասխուրանցի/Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի, հտ. Ա., գլ. Զ., հմմտ.*, Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գիրք. Բ., գլ. ԼԴ.:*

տակութիւնն առաքելակցացն նորա»։ Եւ այնտեղ՝ Երուսաղէմում, ինքը՝ Եղիշէն, «յազդմանէ Սուրբ Հոգւոյն ձեռնադրի ի ձեռաց Սրբոյն Յակոբայ՝ եղբօրն Տեառն, որ էր առաջին հայրապետ Երուսաղէմի»[4]։ Ձեռնադրութեան արժանանալով՝ Եղիշէն վերադառնում եւ շարունակում է իր ուսուցչի կիսատ մնացած գործը։ Բայց, ցաւօք, շատ չանցած՝ Թադէոս առաքեալի պէս մարտիրոսական պսակ է ընդունում եւ ինքը։ Սակայն, կամօքն Աստուծոյ, դարերի ընթացքին «յԱրցախ աշխարհի լուցեալ» լոյսը եւ յոյսն առ Աստուած չեն մարում, այլ պայծառանում են նոր շողով ու զօրութեամբ՝ յարդիւնս Գրիգոր Լուսաւորչի քարոզութեամբ սկիզբ առած Հայոց Դարձի։ Կեսարիայից վերադառնալով՝ Գրիգոր Լուսաւորիչն սկսում է եկեղեցիներ հիմնել Հայոց աշխարհի տարբեր ծագերում։ Եւ, ի թիւս այլոց, հիմնում է Ամարասի վանքը, որի կառուցումն ու բարեկարգումն աւարտին հասցրեց իր թոռ Գրիգորիսը։ Յընթացս ժամանակի սիրուած եւ մարդաշատ ուխտավայր պիտի դառնար վանքը, իսկ Մեսրոպ Մաշտոցի այցով՝ նաեւ կրթական խոշոր կենտրոն, եւ պիտի շատանային ու ծաղկէին Արցախ աշխարհի՝ առաքելական հաւատքի սրբատեղիները։ Բաւական է յիշել լոկ մոգութիւնից ճշմարիտ աստուածպաշտութեան դարձած Վաչագան Բարեպաշտի օրինակը, որ «ըստ թուոյ աւուրց տարւոյն եկեղեցի շինեաց յարեւելս»[5]։ Եւ այսպէս անյիշելի ժամանակներից մինչեւ մեր օրերը երբեւէ ու որեւէ ախոյեանի դէմ չընկրկած արցախահայութիւնը իր հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնների առաջնորդութեամբ անառիկ պահեց իր ամրոց երկիրը՝ շէն ու ծաղկուն փայփայելով այն, ամեն քայլի գիտութեան, կրթութեան, պաշտամունքի վայրեր ստեղծելով, միջին ու խաւար հարիւրամեակները ուսման եւ լոյսի դարերի վերածելով։ Արցախեան եւ անկախութեան շարժման զար-

[4] Մովսէս Դասխուրանցի/Կազանկատուացի, *Պատմութիւն*, հտ. Ա., գլ. Զ.։

[5] *Անդ*, հտ. Գ, գլ. ԻԳ.։ Վաչագան Բարեպաշտի կարեւոր ներդրումներից յիշենք, որ «...իր օրօք գտնուեցին Զաքարիայի, Պանդալէոնի եւ Ս. Գրիգորիսի մասունքները։ Շինել է Ամարասի մատուռը, գումարել է Աղուէնի եկեղեցական ժողովը։ Իրեն է գրել Յովհ. Բ. կաթողիկոսը շրջաբերական մի կոնդակ նեստորականների դէմ». Հր. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Ե., Երեւան, 1942, էջ 38։ Եւ վերջապէս՝ դիտելի են պայքարն ու յաղթանակն աղանդների դէմ. «Յաստուածուստ պսակեալն այն Վաչագան հրամայէր ժողովել զմանկունս կախարդացն, եւ դիւթաց, եւ քրմաց, եւ մատնահատաց, եւ դեղատուաց. հրամայէր ի դպրոցս ունել եւ ուսուցանել զաստուածեղէն ուսումն եւ տեղեակս առնել վարուց քրիստոնէութեան, առ ի հաստատել ի հաւատս երրորդութեանն եւ ուղղել յաստուածապաշտութիւն... Իսկ զյոլովս ի մանկանցն յիւր սեփական գիւղն Ռուտակ անուն ժողովէր եւ կարգէր ռոճիկս եւ դպրապետս ի վերայ. եւ հրամայէր վարժել եւ հմուտ լինել կարգի քրիստոնէութեանն». *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, հտ. Ա., գլ. ԺԸ.։

թօնքով եւ ազատամարտի յաղթանակներով նոր կեանք եւ աւիւն առաւ Արցախի հոգեւոր-գիտամշակութային ընթացքը։ Հազարամեայ կոթողներին ու յուշարձաններին, եկեղեցիներին ու վանքերին աւելացան նորերը, վեր յառնեցին խոնարհուածները։ Մինչեւ վերջերս Արցախի հանրապետութիւնում հաշուառուած էր աւելի քան 2500[6] *եկեղեցի ու վանք, որոնք, սակայն, նախ՝ 2020 թ. 44-օրեայ պատերազմից յետոյ, իսկ աւելի ուշ՝ 2023 թ. սեպտեմբերին հայերի էթնիկ զտման ու բռնի կամ պարտադրեալ տեղահանութեան հետեւանքով անցնում են ադրբեջանական վերահսկողութեան ներքոյ։ 44-օրեայի պայմանական աւարտից օրեր անց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հանդէս եկաւ մի շարք նախաձեռնութիւններով, որոնցից այստեղ կկամենայինք յիշել գրահրատարակչական-քարոզչականը։ Այս ասպարէզից յիշատակելի են Արցախի հոգեւոր մշակութային յուշարձանների քարտէզի, Յէնրիկ Սուազեանի՝ «Աղուանից աշխարհի հոգեւոր առաջնորդները եւ առաջնորդանիստ կենտրոնները»,* Jasmine Dum-Tragut, Christina Maranci, Sergio La Porta *հեղինակային խմբի՝* «Armenian cultural-Religious Heritage of Artsakh», *Զօհրաբ Ըռքոյեանի «Հայոց Քաշաթաղը» գրքերը, որոնց օրերս աւելացաւ Արմինէ Տիգրանեանի վերոնշեալ աշխատութիւնը՝ պատմագիտութեան դոկտոր, պրոֆեսոր Համլէտ Պետրոսեանի խմբագրութեամբ։ Այստեղ հեղինակն անդրադառնում է 2020 թ. 44-օրեայ պատերազմի ընթացքում եւ դրանից յետոյ Ադրբեջանի բռնազաւթած տարածքներում քրիստոնէական՝ հայկական ժառանգութեան (եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, վանական համալիրներ, խաչքարեր եւ այլն) թիրախաւորման, դրանց ոչնչացման եւ բռնիւրացման եղանակներին։ Առանձին շեշտադրմամբ գրքում ներկայացուած են յուշարձանների պահպանութեան հիմնադրոյթները՝ ժառանգութեան «իսկութեան», «ամբողջականութեան», «մշակութային կարեւորութեան», «բացառիկութեան» միջազգային սկզբունքների լոյսի ներքոյ։*

Հեղինակը հաւաքել եւ գիտական մանրամասն քննութեամբ, հիմնաւոր փաստարկներով ներկայացրել է Ադրբեջանի՝ ցայսօր ոչնչացրած կամ վնասած հայկական քրիստոնէական արժէքների զգալի մասը։ Գիտենք, որ Ադրբեջանի պետական եւ հանրային ողջ քարոզչամեքենան լծուած է հակագիտական տեսութիւնների միջոցով միջազգային լայն

---

[6] *Այս ակապակցութեամբ տե՛ս օր.՝* Г. Саргсян, Монастыри и церкви Арцаха: Иллюстрированный каталог / пер. с арм. С. Гасарджяна; Москва, 2022:

*հարթակներում հայոց պետականութեան եւ ողջ հայութեան դէմ կեղծ ու հերիւրածին տեղեկութիւնների տարածմանը։ Համայն հայութիւնն ու միջազգային հանրութիւնը պարբերաբար ականատես են լինում Արցախի պատմամշակութային ժառանգութեան պղծմանն ու ոչնչացմանը, իսկ որոշ դէպքերում նաեւ դրանց, այսպէս ասած, աղուանականացմանն ու ուդիացմանը, խեղաթիւրման ու եղծանման այլեւայլ փորձերի եւ փաստերի։ Համապատասխան օրինակների միջոցով իրականութիւնը վեր հանելուց յետոյ կարելի կլինի արձանագրել, որ Ադրբեջանի վանդալական գործողութիւնները միջազգային եզրոյթով բնորոշելի են իբրեւ ազգասպանութիւն (*ethnocide[7]*) հայ ժողովրդի հնագոյն եւ բնիկ պատմական տարածքում։ Մանրակրկիտ յղումներով ցոյց է տրւում, որ միջազգային բազմաթիւ պայմանագրութիւններով (*convention*) արգելուած են մշակութային յուշարձանների պղծումը, ոչնչացումը, նախնական տեսքի աղաւաղումը եւ վանդալեան այլ դրսեւորումները։ Ադրբեջանը նոյնիսկ պետական քաղաքականութիւն է մշակել, ըստ որի՝ ստեղծուել է Կովկասեան Աղուանքի պատմութիւնն ու ճարտարապետութիւնն ուսումնասիրող մասնագէտներից բաղկացած մի խումբ, որը հեռացնելու է «աղուանական կրօնական տաճարների վրայից հայկական հետքերը»[8]։ Եւ ահա վերջին տարիների ընթացքում ականատես ենք լինում հայկական եկեղեցիների, խաչքարերի, գերեզմանների պղծմանն ու ոչնչացմանը՝ «մասնագիտական» խմբերի գործունէութեանը։*

Ազգային ինքնութեան համար պայքարող Արցախի հայութեան դէմ իրականացուած ոճրագործութիւններն իրական պատկերն են Ադրբեջանի հակահայ պետական քաղաքականութեան։ Սակայն առաւել հիասթափեցնող է Արցախում տեղի ունեցածի հանդէպ միջազգային հանրութեան լռութիւնը կամ անհամաչափ արձագանքը, որ, ըստ էութեան, որեւէ ազդեցութիւն չունեցաւ եւ չէր կարող ունենալ յանցագործութիւնների կանխարգելման ու բացառման հարցում։

Արմինէ Տիգրանեանի «Արցախի քրիստոնէական ժառանգութեան ոչնչացման եւ բռնիւրացման ադրբեջանական քաղաքականութիւնը» գիրքը հանրամատչելի եղանակով հայ ընթերցողին ներկայացնում է նախ՝ հոգեւոր արժէքների պաշտպանութեան հանգամանքները՝ ժա-

---

[7] *Ազգասպանութիւն է համարւում, ժողովրդին ողջ թողնելով հանդերձ, նրա մշակոյթի ոչնչացումը։ Եզրոյթն առաջինը կիրառել է Ռաֆայէլ Լեմկինը 1944 թուականին։*

[8] *Տե՛ս* http://www.genocide-museum.am/arm/*17.02.22*.php։

ռանգութեան պահպանութեան միջազգային համակարգում։ Այնուհետեւ հեղինակն անդրադառնում է հոգեւոր արժէքների պահպանութեան եւ պաշտպանութեան անհրաժեշտութեանը՝ անցեալում, ներկայիս եւ ապագային։ Ըստ կարելւոյն ներկայացուած են Արցախի հայկական քրիստոնէական ամբողջ ժառանգութիւնը եւ ռազմական գործողութիւնների ժամանակ հոգեւոր-մշակութային կոթողների ոչնչացման դէպքերը, պատերազմի քօղի ներքոյ նպատակային կերպով հասցուած վնասներն ու աւերածութիւնները։ Յայտնի է, որ պատերազմից յետոյ տիրանալով հայկական հինաւուրց Շուշի քաղաքին՝ յարձակման ենթարկուեց նաեւ Շուշիի Սուրբ Ամենափրկիչը՝ Ղազանչեցւոց եկեղեցին։ Այս եւ նման դէպքերի կապակցութեամբ հեղինակը նկատում է, որ «Ցեղասպանութեան կանխարգելման պատժի մասին» 1948 թ. պայմանագրութեամբ մշակութային ժառանգութեան ոչնչացումը որակւում է որպէս մշակութային ցեղասպանութիւն եւ յանցագործութիւն՝ ուղղուած մարդկութեան դէմ[9]։

2021 թ. մարտին ադրբեջանական լրատուամիջոցները տարածեցին մի տեսանիւթ, որից պարզ դարձաւ, որ Ադրբեջանի նախագահն այցելել է Հադրութի շրջանի Ծակուռի գիւղի Սուրբ Աստուածածին հայկական եկեղեցի եւ հէնց այնտեղ յայտարարել է, որ այն «ալբանական» է, հայերէն արձանագրութիւններն ու խաչքարերը կեղծ են, եւ Ադրբեջանը պատրաստւում է վերանորոգել եւ բերել «հին տեսքին»[10]։ Այս յայտարարութիւնը միանշանակ մշակութային ժառանգութեան ձեւափոխման միտում է արտայայտում։ Ըստ ԻՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նիւթական մշակութային ժառանգութեան պահպանութեան» պայմանագրութեան՝ մշակութային ժառանգութեան պահպանում նշանակում է ժառանգութեան կենսունակութեան ապահովում։ Նոյնատիպ դրոյթներից է, որ պահպանել ժառանգութիւնը նշանակում է ապահովել դրա ամբողջականութիւնը, ժառանգութեան իսկութեան, կարեւորութեան, միատարրութեան, բացառիկութեան չափանիշները։ Իսկ ըստ «Զինուած բախումների դէպքում մշակութային արժէքների պաշտպանութեան մասին» 1954 թ. պայմանագրութեան՝ արգելւում է մշակութային արժէքի ցանկացած վերափոխում, ինչպէս նաեւ դրա օգտագործման ձեւի փոփոխութիւն, որ միտուած է թաքցնելու կամ ոչնչացնելու մշակութային, պատմական կամ գիտական վկայութիւնները։ Այստեղ պարզապէս յիշեցնենք, որ Արցա-

---

[9] *Տե՛ս* http://www.genocide-museum.am/arm/*08.12.2018*-UNGC*70*.php։

[10] *Տե՛ս* http://www.hayzinvor.am/*99840*.html։

խի հայկական ճարտարապետութեան գլուխգործոցներից մէկը՝ Հադրութի շրջանի Ծակուռի գիւղի Սուրբ Աստուածածին եկեղեցին, երբեմնի փթթուն Ծաղկավանք վանական համալիրից պահպանուած միակ եկեղեցին է, որ կանգուն է ԺԲ. դարից ի վեր։ Դիտելի է, որ հայկական եկեղեցիների իւրացման գործում Ադրբեջանի ցանկալի թիրախներից էր Դադիվանքը, որի հանդէպ ոտնձգութիւնները քօղարկւում էին կեղծ եւ ուշադրութիւն շեղող քարոզչութեամբ։ Բնական է այս կապակցութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի յայտարարութիւնը. պատմական անհերքելի ճշմարտութիւն է, որ վանքն ի սկզբանէ եղել է հայկական եւ որեւէ առնչութիւն չունի որեւէ օտար հոգեւոր կառոյցի հետ, առաւել եւս՝ այսօրուայ նորայայտ աղուանաուդիական կրօնական համայնքի հետ[11]։

Մշակութային արժէքների գործառոյթների փոփոխման օրինակները բազմաթիւ են՝ Հադրութի շրջանի Դիզափայտ լեռան գագաթին գտնուող Կատարոյ վանքի պղծումը, Մեխակաւանի Ջօրաւոր Սուրբ Աստուածածին եկեղեցու աւերումը, Ջրաղացներ գիւղի Սուրբ Աստուածածին եկեղեցու բռնափոխումը, Շուշիի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ կամ Կանաչ ժամ եկեղեցու՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցուն վերագրելը եւ այլն։

Մշակութային անվտանգութիւնն ազգային անվտանգութեան կարեւորագոյն բաղադրիչներից է՝ առաւել եւս փոքրաթիւ ազգերի համար եւ յատկապէս մեր ժամանակներում։ Մի կողմից համահարթեցումը, համաշխարհայնացումը, մշակութային ուծացումը, իսկ միւս կողմից հակամարտութիւններն ու պատերազմները իրական սպառնալիք են մշակութային ժառանգութեան պահպանութեան համար։

Ցեղասպանութեան կանխարգելման Լեմկինեան հաստատութիւնը՝ որպէս միջազգային անկախ հասարակական կազմակերպութիւն, Արցախեան պատերազմից յետոյ «կարմիր դրօշի» բազմաթիւ ահազանգեր է հնչեցրել Ադրբեջանի վերաբերեալ՝ վերջինիս գործողութիւնները որակելով ցեղասպանական։ Հաստատութիւնն իր յայտարարութիւններում մէջ նշել է, որ Արցախը 99,7%-ով հայկական է՝ իր անբաժանելի մշակութային ժառանգութեամբ[12]։ Այս եւ նման փաստերի արձանագրման, այլ եւ այլ վկայութիւնների մէկտեղման աշխատանքներն այսօր այժ-

---

[11] *Տե՛ս* https://www.azatutyun.am/a/*32391576*.html։

[12] *Տե՛ս* https://www.lemkininstitute.com/statements-new-page/statement-on-self-determination-of-armenians-in-artsakh-*(*south-caucasus*)%3*A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide։

մէական են, պահի հրամայական, որ ապագայում ազգային հարցերի լուծմանը նուիրուողների համար խիստ օգտակար եւ անհրաժեշտ կլինեն։ Մայր Աթոռի այս հրատարակութիւնը նախատեսուած է մշակութային ժառանգութեան պահպանութեամբ զբաղուող մասնագէտների, ուսանողների եւ արցախահայութեան մշակութային ժառանգութեան պաշտպանութեամբ ու պահպանութեամբ մտահոգ ընթերցողների լայն շրջանակի համար։

Տարւոյս հոկտեմբեր 1-ի համազգային եւ զօրակցական աղօթքից յետոյ Վեհափառ Հայրապետն իր պատգամում նշեց. «Մեր հայրենեաց անգին նշխարը՝ Արցախ աշխարհը, մերն է ու մեր սրտում է, եւ Արցախի հայապատկան լինելու գիտակցութիւնը երբեք չի տկարանայ սերունդների մէջ»[13]։ Այս գաղափարին պէտք է միտուած լինեն մեր գիտակրթական ողջ գործունէութիւնը, ներուժը, իսկ ազգայինին հակառակ «գիտութիւնը», ապազգային կրթութիւնն ու այլասերող դաստիարակութիւնը պէտք է ի սպառ մերժուած լինեն. այլ ճանապարհ, ուղի եւ անգամ արահետ չունենք։

ՅԱՍՄԻԿ ՄԱԴՈՅԵԱՆ



[13] *Տե՛ս* https://www.aztagdaily.com/archives/*594409, հմմտ. ներկայ համարի էջ 5—8։*